ԱԼԱՇԿԵՐՏԻ ԳԱՎԱՌԱԿԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
(Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

Կարին նահանգի Բայազետ գավառի Ալաշկերտի գավառակը պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Բագրևանդ գավառն է, ունի հարուստ անցյալ, հայտնի է որպես հացի շտեմարան: Գավառակը հյուսիս-արևելքում սահմանակից էր Երևանի նահանգին, հյուսիսից՝ Կարսի մարզին, հյուսիս-արևմուտքում Կարինի գավառակն էր, հարավում՝ Դութաղի և Դիադինի գավառակները, արևելքում՝ Բայազետի գավառը:

Գավառակի ամենաբերրի ու հայաշատ հատվածն Ալաշկերտի դաշտն էր: Այն գտնվում էր Շարին և Ծաղկանց լեռնաշղթաների միջև, երկարությունը 85 կմ էր, լայնությունը՝ 50 կմ, ծովի մակերևույթից բարձր էր 1900 մետրով: Դաշտի հարավարևելյան մասը կոչվում էր Զիրավի դաշտ, որտեղ 371 թ. հայոց բանակը՝ Մուշեղ սպարապետի գլխավորությամբ, փառավոր հաղթանակ տարավ պարսիկների դեմ:

Կարինի Առաջնորդարանի վիճակագրությամբ Ալաշկերտն ուներ 111 գյուղ, որոնցից միայն 12-ն էին հայաբնակ՝ 840 տուն բնակչությամբ[1]: Իսկ արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գավառակն ունեցել է 11 հայկական գյուղ՝ 640 տուն, 4.480 շունչ բնակչությամբ[2]: Ալ. Երիցյանն Ալաշկերտի գավառակում հաշվում է 70 գյուղ, որոնցից 53-ը՝ քրդաբնակ, 7-ը՝ հայաբնակ. 9.040 շունչ քրդեր էին, 2.978 շունչ՝ հայեր[3]:

Կան նաև մի շարք այլ վկայություններ, որոնցից մեկը տեղեկացնում է, որ 1880 թ. գավառակի 14 հայկական գյուղերն ունեին 604 տուն, 1893 թ.՝ 876 տուն հայ բնակչություն[4]: Իսկ գավառակի 115 գյուղերում ապրում էր 20.211 մարդ. 13.863-ը մահմեդականներ էին, 3.217-ը՝ հայ լուսավորչականներ, 2.754-ը՝ հայ կաթոլիկներ, 99-ը՝ հայ բողոքականներ, 178 մարդ տարբեր դավանանքների էին պատկանում[5]: Այսինքն՝ հայերի թիվը հասնում էր 6.070 շնչի:

Միջինի տարբերակով ունենում ենք 708 տուն, 4.961 շունչ հայ բնակչություն, որը 20 տարվա բնական աճի ցուցանիշ է: Այսինքն՝ 1880 թ. գոյություն ունեցող 604 տուն հայությունն աճել է 104 տնով, որն ընդունելի տեսակետ է, քանզի Ա. Համբարյանի հաշ-

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 476, ց. 1, գ. 237, թ. 5:*

[2] *Նույն տեղում, գ. 319, թ. 63 շրջերես:*

[3] *«Փորձ» (Թիֆլիս), 1880, թիվ 6–7, էջ 216–229 (տե՛ս Ալ. Երիցյանի հոդվածը):*

[4] *ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 180, թ. 30:*

[5] *Նույն տեղում, թ. 35:*

վումների համաձայն 1880–1890 թթ. արևմտահայության աճը կազմել է 458.672[6] մարդ, ասել է՝ 3.063.676 հայ բնակչությունն ունեցել է 22.939 շնչի աճ: Այստեղից էլ 20 տարում հնարավոր էր գավառակի հայ բնակչության 1.652 շնչի աճ, որը տարեկան կազմում էր 82,6 շունչ: Գ. Բաղալյանի հաշվումներով 1914 թ. Ալաշկերտի միայն 13 գյուղեր ունեին 12.015 հայ բնակչություն[7]:

Գավառակի կենտրոնն Ալաշկերտ քաղաքն էր: Այն գտնվում էր Արածանիի վերին հոսանքի շրջանում՝ Սակավետ լեռան հարավարևելյան կողմում՝ Շահգեոլ տեղանվան վերելքի տեղում՝ «մի բանաստեղծական դիրքի վրա»[8]՝ Տրապիզոն–Կարին–Մակու–Թավրիզ ճանապարհին: Մինչև XVII դարն անվանվել է Վաղարշակերտ: Կարծիք կա, որ քաղաքը կառուցել է Արտաշես Բ-ի թոռ Վաղարշ Ա թագավորը (117–140 թթ.): Այնուհետև այն դարձել է Ալաշկերտ: Ենթադրվում է, որ այդ անունը ծագել է քաղաքին մոտ գտնվող ուրարտական Անաշե բնակավայրի անվանումից: Քաղաքի հետագա շրջանի մասին հիշատակություններ կան Հակոբ Կարնեցու[9] և Ղ. Ինճիճյանի[10] աշխատություններում:

1829 և 1878 թթ. քաղաքի բնակչության մեծ մասը գաղթեց Արևելյան Հայաստան, իսկ մնացած հատվածը զոհ գնաց սուլթան Համիդի կազմակերպած կոտորածներին, և երբեմնի հայաշատ քաղաքը դարձավ «մի խղճուկ պատկեր»[11]:

Ալաշկերտի հայությունն զբաղվում էր արհեստներով, առևտրով, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, կային նաև երկրագործությամբ զբաղվող ընտանիքներ: Քաղաքի շուկայում կար 50–60 կրպակ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին: Նրանք հիմնականում բնակվում էին Բլեջան, Սորանցոց, Փեթակչոց թաղերում, որտեղ էլ գտնվում էին իրենց հոգևոր, մշակութային և կրթական հաստատությունները: Ալաշկերտում էր գտնվում Ներսես Գ կաթողիկոսի ժամանակ կառուցված Սուրբ Աստվածածին կաթոլիկ եկեղեցին, որի ներքին և պաշտոնեից հաստույթը կազմում էր 4.500 լիրա[12]: Քաղաքում գործել են երկու հայկական և մեկ թուրքական դպրոց: Հայկական դպրոցներից մեկը կոչվում էր Բագրատունյան, որն ուներ 2.000 լիրա հաստույթ.

---

[6] *Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1963, - 2, էջ 113:*

[7] *Գ. Բ ա ղ ա լ յ ա ն. Էրզրումի վիլայեթի որոշ կազաների հայ բնակչության թվաքանակի ճշգրտումն ըստ Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների 1914–1915 թթ. կազմված վիճակագրական ցուցակների. տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 4, Երևան, 2001, էջ 214:*

[8] *Ա - Դ ո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 214:*

[9] *Հ ա կ ո բ Կ ա ր ն ե ց ի. Տեղեկագիր, Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 21:*

[10] *Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. Աշխարհագրութիւն չորից մասանցն աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 114:*

[11] *Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 215:*

[12] *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ազատյանի ֆոնդ (այսուհետև՝ ԱՖ), գ. 23, թ. 11:*

այն գոյանում էր հանգանակություններից և ուներ 80 աշակերտ[13]: 1877–1878 թթ. Ալաշկերտն ունեցել է 145 քրդական և 122 տուն հայկական ընտանիք[14]: Գ. Սրվանձտյանցի հաշվումներով քաղաքում կային 82 տուն կամ ընտանիք, 750 շունչ հայ, 50 թուրք, 1.500 քուրդ բնակչություն[15]: Արխիվային փաստաթղթերից մեկն էլ վկայում է, որ այդտեղ ապրել է 200 ընտանիք, 1.400 շունչ հայ բնակչություն[16]: Բնակչության նույն քանակն ընդունում է նաև «Ա-Դոն»[17]:

Թեև հաշվումների միջինի տարբերակով ստանում ենք 151 տուն, 1.101 շունչ հայ բնակչություն արդյունքը, բայց հավանականը Կարինի Առաջնորդարանի վկայությունն է, որովհետև Գ. Սրվանձտյանցի նշած 82 ընտանիքը 20 տարում ինչպես աճ է տվել, այնպես էլ քաղաքում են հանգրվանել համիդյան կոտորածներից մազապուրծ շատ ընտանիքներ, որոնց քանակի մասին վկայություններ չկան:

Ալաշկերտ գավառակի ամենամեծ հայաշատ գյուղը Համատն էր: Այն հայտնի էր նաև Ամատ, Ամադ, Ամատա անուններով: Գյուղը եղել է Ամատունիների սեփականությունը, որտեղից էլ ենթադրվում է՝ ծագել է գյուղի անունը: Գտնվում էր Արածանիի վերին հոսանքում՝ Ալաշկերտից հյուսիս-արևելք: Մինչև XIX դ. վերջերը գյուղը բարեկեցիկ էր: Սկսված հալածանքների պատճառով գյուղի բնակչության մեծ մասը գաղթեց:

Համատում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցին ուներ երեք խորան, որի հասույթը կազմում էր 2.000 ներքին, 2.500 լիրա պաշտոնեից: Գյուղում գործում էր Արշարունյաց վարժարանը, որի 2.000 լիրա հասույթը գոյանում էր հանգանակություններից: Այն ուներ 70 աշակերտ[18]:

Գ. Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 100 տուն, 950 շունչ հայ բնակչություն[19]: Կարինի Առաջնորդարանի վիճակագրությունը համընկնում է վերջին նշված հաշվումներին[20]: Մեկ այլ աղբյուր հայտնում է, որ գյուղն ունեցել է 113 տուն բնակչություն (մոտ 791 շունչ)[21]: 1880 թ. Համատն ունեցել է 66 տուն, 641 շունչ, 1893 թ.՝ 113 տուն բնակչություն[22]: Այսինքն՝ 13 տարում աճը կազմել է 47 տուն, 329 շունչ: Կարելի է ասել, որ Գ. Սրվանձտյանցի վիճակագրությունն ամենահավանականն է: Միջին հաշվարկով կունենանք 100 տուն, 950 շունչ հայ բնակչություն:

---

[13] *Նույն տեղում:*
[14] *Տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ), հ. 2, Երևան, 1988, էջ 64:*
[15] *ԳԱԹ, ԱՖ, գ. 23, թ. 11:*
[16] *ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 319, թ. 63 շրջերես:*
[17] *Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 215:*
[18] *ԳԱԹ, ԱՖ, գ. 23, թ. 11:*
[19] *Նույն տեղում:*
[20] *Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 215:*
[21] *ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 799, թ. 52:*
[22] *Նույն տեղում:*

Խաստուր (հայտնի է նաև՝ Խանզրը, Խանզիր, Խասդուր, Խասթուր, Խացտուր, Հացտուր անուններով) գյուղը գտնվում էր Ալաշկերտի քաղաքից 12 կմ հարավարևմուտք, որը մարգագետիններով, այգիներով, բանջարանոցներով հարուստ, բարդիներով շրջապատված բնակավայր էր: Այն հանրածանոթ էր իր ջրառատությամբ, սառնորակ աղբյուրներով: Հացաշատ գյուղ էր, որտեղից էլ, հավանաբար, ծագել է անունը: Նաև մշակութային կենտրոն էր: Այստեղ գործում էին ընդօրինակողներ (գրիչներ): Խաստուրում, դպրոցի գրադարանից բացի, գործել է նաև Խաչիկյան անունով գրադարան[23]:

Գյուղը տնտեսապես բարեկեցիկ էր: Գյուղապետ Խաչատուր Սարգսյանի հուշերից տեղեկանում ենք, որ XIX դ. երկրորդ կեսին այն ունեցել է 2.000 գլուխ ոչխար, 1.000 գլուխ կով, 200 էգ գոմեշ, 200 լծկան գոմեշ, 300 գույգ եզ, 100 ձի, 50 էշ, 100 գութան, 30–40 ռուսական գութան, 200 սայլ, 300–400 արոր: Բերքատվության առումով ևս Խաստուրը չէր զիջում գավառակի մյուս գյուղերին: Յուրաքանչյուր տարի ստացվում էր 8.000–10.000 սմար (1 սմարը 128 կգ է)[24] հացահատիկ, 400 սմար կտավատ: Գյուղում գործել են 10 ջրաղաց, ձիթհանք: Ներսես Շնորհալի կաթողիկոսի (641–661 թթ.) նախաձեռնությամբ գյուղում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը «800 տարուան հնութիւն ունի»[25]՝ ընդարձակ դահլիճով, խաչաքանդակներով զարդարված խորաններով: Լենկթեմուրի արշավանքների ժամանակ եկեղեցին երկու անգամ հրդեհվել է, սակայն վերաշինվել, նորոգվել է 1862 թ.[26]: Ունեցել է 2.000 ներքին, 1.000 լիրա պաշտոնեից հասույթ, իսկ այդտեղ գործող Արագածյան վարժարանը՝ հանգանակություններով հավաքված 1.000 լիրա հասույթ, 35 աշակերտ[27]:

Խաստուրն ունեցել է 200 տուն հայ բնակչություն, որից 90 տունը հայ լուսավորչական էին, 80-ը՝ կաթոլիկ, 4-ը՝ բողոքական, մնացած 26 տունը քրդեր էին[28]: Գ. Սրվանձտյանցը գյուղում հաշվում էր 28 տուն, 250 շունչ հայ բնակչություն[29]: Կարինի Առաջնորդարանի վիճակագրությամբ՝ 55 տուն բնակչություն[30]: XX դ. սկզբներին գյուղն ունեցել է 160 տուն բնակչություն: Հեղինակներից մեկն էլ հայտնում է, որ XIX դ. վերջերին գյուղն ունեցել է 300 տուն հայ բնակչություն[31]:

---

[23] *Նույն տեղում, գ. 425, թ. 1:*
[24] *Նույն տեղում:*
[25] *Նույն տեղում:*
[26] *Նույն տեղում:*
[27] *ԳԱԹ, ԱՖ, գ. 23, թ. 11:*
[28] *ՀԱԱ, ց. 1, գ. 425, թ. 1:*
[29] *ԳԱԹ, ԱՖ, գ. 23, թ. 11:*
[30] *Ա - Դ n. նշվ. աշխ., էջ 215:*
[31] *ՏԲ, h. 2, էջ 682:*

Ներկայացված վկայությունները, սակայն, չեն արտացոլում Խաստուրի բնակչության քանակի իրական պատկերը, որովհետև դարասկզբին գյուղն ունեցել է 500 տուն հայ բնակչություն, որի մի մասը 1829 թ. գաղթել ու բնակություն է հաստատել Շիրակի Փանիկ գյուղում: Գաղթածների քանակը, սակայն, հայտնի չէ: Վկայություններ չկան նաև 1894–1896 թթ. կոտորածների ժամանակ զոհվածների մասին: Ուստի, միջինի հաշվումով կունենանք 111 տուն, 786 շունչ հայ, 26 տուն, 182 շունչ թուրք բնակչություն, որը թեև չի համապատասխանում հայաշատ այդ բնակավայրի բնակչության իրական քանակին: Սակայն, չունենալով հավաստի այլ վկայություն՝ այն կարելի է ընդունել որպես գյուղի բնակչության իրական քանակ:

Խաստուրցիներն զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ, արհեստներով, առևտրով:

Այսպիսով, Ալաշկերտ գավառակում հաշվվում էր շուրջ 80 գյուղ, որոնցից առավել հայաշատ էին Ալեքսանը, Բոշեկը, Բյուրապատը, Դավոն, Երանոսը, Զատոն, Խրտրրը, Կորալը, Մաժկերտը, Նավիկը, Ներքին Ղազին, Շահնազարը, Չամրլուն, Չուրակը, Ջաջուռը, Տման, Տումարը, Քարաձորը:

Հաղթահարելով բազմաթիվ փորձություններ՝ գավառակի հայության համար սկսվեց ծանր ժամանակաշրջան, երբ ընդգծված դարձավ սուլթանական վարչակարգի հայակուլ քաղաքականությունը: Տնտեսական ու քաղաքական, կրոնական հալածանքները խաղացին իրենց դերը, և գավառակի հայությունը, զրկվելով գոյության պահպանության գրեթե բոլոր միջոցներից, հեռացավ պատմական հայրենիքից:

ВОЛОСТЬ АЛАШКЕРТ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА
(Историко-демографическое исследование)

ОВАННЕС ЗАТИКЯН

Резюме

Волость (округ) Алашкерт – это провинция Багреванд страны Айарарат исторической Армении. Самая плодородная и плотнонаселенная армянами часть волости – это поле Алашкерта. По статистике Резиденции главы епархии Карина волость имела 111 деревень, из которых только 12 были населены армянами и имели 840 домов. В другом архивном документе сообщается, что в волости было 14 деревень, населенных армянами. В общем, число армян колеблется в пределах 6–12 тысяч. Преодолев множество испытаний, армянское население вступило в XIX в., когда армянопоглощающая политика султанского режима стала подчеркнутой. Экономические, политические и религиозные гонения сыграли свою роль, и армянское население волости, лишившись практически всех средств существования, ушло из исторической родины. Свою роль в этом деле сыграли переселения 1828, 1878 гг. А потом последовали гамидовские

погромы 1894–1896 гг., и волость лишилась армян, превратившись в область кочующих завоевателей и различных магометанских племен. Это состояние наиболее выразительно описывает один из авторов, написав, что волость представляет из себя «жалкое зрелище».

ALASHKERT DISTRICT IN THE SECOND HALF OF THE 19th CENTURY
(Historical–demographic research)

HOVHANNES ZATIKYAN

Summary

Alashkert district (region) was the province of Bagrevand of the country of Ayararat of historical Armenia. The field of Alashkert was the part which was the most fertile and densely populated by Armenians. According to the statistics of the Primacy of Karin the region had 111 villages and only 12 of which were inhabited by Armenians and had 840 houses population. Another archival document reveals that there were 14 villages inhabited by Armenians. On the whole, the number of the Armenian population varied within the limits of 6–12 thousands. Having overcome many temptations the Armenians of the region entered the 19th century when the Armenian- absorbing policy of the Sultan's regime became obvious. Economic, political, and religious persecutions played their role and the Armenians of the region, having lost almost all means of survival, left the historical homeland. The resettlement of 1828 and 1878 played their role in this matter. Then the 1894–1896 Hamidian massacres followed and the district was deprived of Armenians turning into the region of nomadic conquerors and various Mohammedan tribes.This situation is most expressively described by one of the authors who writes that the region is a 'miserable sight'.